05.03.2026թ. կնքված **«ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-09-04»** պայմանագրում
փոփոխություններ / լրացումներ կատարելու վերաբերյալ

համաձայնագիր № 3

ք. Երևան 30 ապրիլի 2026թ.

ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ստեփան Աթոյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, «Դելտա» ՍՊ ընկերությունը, ի դեմս տնօրեն Ա.Կարաբաշյանի, (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, հիմք ընդունելով քաղաքացիական օրենսդրությունը, ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի 526-Ն որոշման 56-րդ կետի 4-րդ ենթակետը և № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-09-04» պայմանագրի 8.5 և 8.6 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

Համաձայնագրի առարկան

1. Հետագա համագործակցության նպատակով կողմերը որոշեցին 2026թ. մարտի 5-ին կնքված № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-09-04» պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով:
2. Սույն համաձայնագիրը համարվում է № «ԳՀԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2026-09-04» գնման պայմանագրի անբաժանելի մաս:
3. Սույն համաձայնագրում չնշված կողմերի գնման պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ սույն համաձայնագիր № 3-ն է հայերեն լեզվով, երկու օրինակից, որը ունի հավասարազոր իրավաբանական ուժ:

Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ԱՆ «ՀՎԿ ազգային կենտրոն» ՊՈԱԿ	«Դելտա» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, 0025, Մ.Հերացի 12	ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4
Կենտրոնական գանձապետարան	«Կոնվերս բանկ» ՓԲԸ
Հ/Հ 900018004649	Հ/Հ 193004670058
ՀՎՀՀ 02625503	ՀՎՀՀ 00004912
Գլխավոր տնօրեն՝ Ս.Աթոյան	Տնօրեն՝ Ա.Կարաբաշյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ